

ԳԻՐԱԿԱՐԾԱՌՈՒԹՅՈՒՆ

ԱՌՏԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱՅԵՐԵՆԻ ՆՈՒՅՆԱԲԱԳՂԱԴՐԻՉ ՓՈԽԱՏԵՂՈՒՅԹՆԵՐԸ

Արդի բառագիտության կարևոր խնդիրներից է բառերի ինչպես ներբառայության, այնպես էլ միջբառային իմաստների քննությունը, նրանց հարաբերակցության բացահայտումն ու ճշգրտումը: Միջբառային իրողությունների քննության համարեքստում հերաքոքրական լեզվական երևույթ են, այսպես կոչված, նույնաբաղադրիչ փոխարեղությունները, որոնք ներկայանում են առաջին բարդության բաղադրիչ փայրերը՝ շրջուն շարադասությամբ: Այդ կարգի բաղադրությունները, սկզբնավորվելով գրաբարից, զգալի քանակության են հասել աշխարհաբարում և կարող են հանգամանալից ուսումնասիրության:

Նայերենի բառային կազմի նույնաբաղադրիչ փոխարեղությունների քննությանն է նվիրված բանասիրական գիտությունների թեկնածու Սուսաննա Գևորգյանի ուսումնասիրությունը¹: Նեղիմասկին իր առաջադիր խնդիրներից է համարում փոխարեղություններից նույնաբաղադրիչ կազմությունները տարանջատելը և նրանց հնչյունական, իմաստային, խոսքիմասային, տաղաչափական և ոճական քննություն կատարել:

Նկատենք, որ Ս. Գևորգյանը կատարել է համալիր քննություն և լուծել իր առաջադիր խնդիրները: Նա իր ուսումնասիրության փաստական նյութը քարտադրել է գրաբարի և արդի հայերենի բացառական բառարաններից, մասնագիտական, տեղեկատվական այլեայլ աղբյուրներից, գիտական, գեղարվեստական գրականությունից և այլն:

Սույն մենագրությունն ունի կարևոր տեսական և գործնական նշանակություն. այն առանձնացնում է ընդհանուր հայերենի բառային կազմում նույնաբաղադրիչ փոխարեղությունների որոշակի շերտ, բացահայտում դրանց բառաբերականական առանձնահատկությունները և նյութ տալիս փոխարեղությունների հերաքա ուսումնասիրությունների համար՝ այլ կտրվածքով:

Գործնականում այն կարող է նպաստել տաղաչափական խնդիրների լուծմանը, ինչպես նաև օգնել բանաստեղծության կառուցվածքի (ոտքի և հանգավորման) խնդիրների կարգավորմանը:

¹ Սուսաննա Գևորգյան, Նայերենի նույնաբաղադրիչ փոխարեղությունները, Երևան, 2013, 186 էջ:

Ս. Գետրգյանը նույնաբաղադրիչ փոխափոխությունները ներկայացնում է երկու կտրվածքով՝ լեզվական և ոճական: Ըստ այդմ՝ մենագրությունը բաղկացած է երկու գլխից: Առաջին գլխում սահմանվում են նույնաբաղադրիչ փոխափոխությունները որպես լեզվական իրողություններ, այնուհետև քննվում են դրանց կազմությունը, հնչյունակազմությունը, իմաստաբանությունը և ձևաբանական արժեքները: Արդի հայերենի բառային կազմից առանձնացվում են այն փոխափոխությունները, որոնք մեզ են անցել գրաբարից:

Փոխափոխությունների հնչյունական յուրահատկությունները քննելիս հեղինակը ցույց է տալիս, որ փոխափոխությունների բառագույզերի անդամները լինում են տարահնչյուն և նույնահնչյուն, առաջին դեպքում բառերը կազմված են հիմնականում միեւնույն հնչյուններից (որոշակի տարբերություններով), երկրորդ դեպքում դրանք բացառապես նույն հնչյուններն ունեն: Հնչյունակազմական տարբերությունների մեջ հեղինակը շեշտում է հնչյունափոխության դերը (լանջահովիտ ↔ հովտալանջ, փորձագետ ↔ գիտափորձ), և հավելուրդային տարրի առկայությունը (առատրակաթ ↔ կաթնառատ, ձիաբեռ ↔ բեռնաձի), հոդակապի առկայությունը (հանքաքար ↔ քարհանք, ունայնաձեռն ↔ ձեռնունայն, արամնաշրթնային ↔ շրթնարամնային) և այլն:

Կատարելով նույնաբաղադրիչ փոխափոխությունների իմաստային քննություն՝ հեղինակը դրանք իմաստային տեսակետից բաժանում է երեք խմբի՝ նույնիմաստ, մերձիմաստ և հեռիմաստ:

Իբրեւ նույնիմաստ փոխափոխություններ են ներկայացվում հարադրությունները և շաղկապական բարդությունները՝ ասեղ-թել ↔ թել-ասեղ, ձեռուտը ↔ ուրու-ձեռ: Ընդ որում՝ փոխափոխությունների երկրորդ եզրը կարող է լինել հարադրություն՝ հասարակող ↔ կողը հաստ, պնդաճակատ ↔ ճակատը պինդ և այլն:

Մերձիմաստ փոխափոխությունները իմաստային բացարձակ նույնություն չեն դրսևորում և միջանկյալ դիրք են գրավում նույնիմաստ և հեռիմաստ փոխափոխությունների միջև, ինչպես՝ դառնաբաղդը ↔ բաղդադառն, դառնաթթու ↔ թթվադառն, ավագախիճ ↔ խճավագ, բանավիճել ↔ վիճաբանել և այլն:

Հեռիմաստ փոխափոխությունների բաղադրիչները արտահայտում են տարբեր իմաստներ, ինչպես՝ խաղազույգ ↔ զուգախաղ, եղեգնաշաքար ↔ շաքարեղեգ, որսաթռչուն ↔ թռչնորս և այլն:

Ս. Գետրգյանը, փոխափոխությունները ներկայացնելուց բացի, անդրադառնում է նաև փոխափոխության զույգի անդամների ներքին իմաստային կապերին՝ որոշիչ-որոշյալ, հարկացուցիչ-հարկացյալ, ստորոգյալ-ուղիղ խնդիր, ստորոգյալ-անուղղակի խնդիր և այլն:

Նույնաբաղադրիչ փոխափոխությունների ձևաբանական արժեքի քննությունը մենագրության հաջորդած բաժիններից մեկն է: Այսպես Ս. Գետրգյանը ցույց է տալիս, որ փոխափոխությունների երկրորդ անդամը կարող է համապատասխանել առաջին անդամի խոսքիմասային արժեքին, ինչպես՝ անվանաբայական ↔ բայականական, լեռնահովտային ↔ հովտալեռնային (աժական-աժական), ելնել-

մընել ↔ մընել-ելնել, բացել-փակել ↔ փակել-բացել, (բայ-բայ), այսուհետև ↔ հետպայսու, մոտորքայլ ↔ քայլամոտոր, աջ ու ձախ ↔ ձախ ու աջ (մակբայ-մակբայ) և այլն:

Նեղինակը նուրբ դիպողականություն է ցուցաբերում նույնաբաղադրիչ փոխաբերությունների խոսքիմասային արժեքների գնահատման հարցում: Նա ցույց է տալիս, որ նման կազմություններում երկրորդ բաղադրիչը կարող է փոխել իր խոսքիմասային արժեքը, ինչպես՝ քայլարշավ ↔ արշավաքայլ (գոյական-մակբայ), գեղանկարիչ ↔ նկարչագեղ (գոյական-ածական) և այլն:

Նույնաբաղադրիչ փոխաբերությունների բնությունը լեզվական առումով թերի կլիներ, եթե հեղինակը չանդրադառնար գրաբարյան իրողություններին: Կապարելով գրաբարի բառային կազմի համաժամանակյա բնություն՝ Ս. Գևորգյանը մեզ է ներկայացնում գրաբարյան շուրջ 300 բառազույգերի ցանկ, որոնց մի մասը տարիմաստ փոխաբերություններ են, մնացած մասը՝ նույնիմաստ: Նկատի ունենալով ժամանակային ու ներլեզվական գործոնները՝ նա առանձնացնում է փոխաբերական բառազույգերի անդամների բնույթը բացահայտող հետևյալ շրջանները՝ գրաբարյան կազմություններ (70 զույգ՝ բառաբաղված ՆՏԲ-ից), գրաբար-աշխարհաբար կազմություններ (250 զույգ):

Աշխարհայան այս գլուխը որոշակի գաղափար է տալիս նույնաբաղադրիչ փոխաբերությունների նաև իմաստակառուցվածքային և ձևաբանական առանձնահատկությունների վերաբերյալ և խոսում է նրա հեղինակի լեզվաբանական պարզաստվածության մասին, առավել ևս՝ լեզվական փաստերը համադրելու և վերլուծելու, դրանցից տեսական ընդհանրացումներ կարտաբերելու կարողության մասին:

Ինչպես նշեցինք, հեղինակը չի սահմանափակվում խնդրո առարկա բառազույգերի բնությամբ. նա անդրադառնում է նույնաբաղադրիչ փոխաբերությունների ոճական արժեքի բացահայտմանը չափածո խոսքում, արժեուրում նրանց դերը բառաստեղծական հանգների ու բանաստեղծի կազմության հարցում և վեր հանում այդ բառերի ոճական նրբերանգները:

Նա արժեուրում է նույնաբաղադրիչ փոխաբերությունների կիրառական արժեքն ըստ տաղաչափության երկու պահանջի՝ հանգավորման և բանաստեղծական ուրբի կառուցման. հմմտ.

... ծավի լույսեր **ցիրուցան**, ... ազդո՜ւ նկան ու **անցան** (Մ. Մեծարենց):

... շնչում էր՝ **անհիծիր** և՛ ... ճաճանչները **ցան ու ցիր** (Վ. Տերյան) (հանգավորում):

Վ. Տերյանը **գանգրագեղ** բառի փոխարեն գործածել է **գեղագանգուրը**՝ բանաստեղծական ուրբի պահանջով. Մեղմ գիշերի **գեղագանգուր** երագում ... (Վ. Տերյան):

Ս. Գևորգյանը բանաստեղծական բազմաթիվ օրինակներով հիմնավորում է նույնաբաղադրիչ փոխաբերությունների առաջացման բանաստեղծական գործոնները:

Մենք կարևորում ենք այն հանգամանքը, որ հեղինակը ուսումնասիրությունից դուրս չի թողել նույնաբաղադրիչ փոխարեղությունների ռճական դերի քննությունը. նա ցույց է տվել, որ ռճական առումով փոխարեղությունները հարաբերակցում են հնաբանություններին կամ նորաբանություններին, սովորական, առօրյա-խոսակցական բառերին՝ սրեղծելով բառիմասարի արտահայտման ձևի թարմացում (նպարակակեր $\leftrightarrow$ կերնպարակ), ռճական երանգավորում (տասնվեցամյա $\leftrightarrow$ վեշտասնամյա), տեսականության իմաստներ (ամառ-ձմեռ $\leftrightarrow$ ձմեռ-ամառ), տարածականություն (վար ու վեր $\leftrightarrow$ վեր ու վար) և այլն:

Աշխարանքն ունի «Նավելված» բաժինը, որտեղ տրված է շուրջ 2250 նույնաբաղադրիչ փոխարեղությունների բառացանկ, որն իմաստային բացատրություններով և բնագրային վկայություններով կարող է օգնել հեղադաշտում նույնաբաղադրիչ փոխարեղությունների ամբողջական բառարան կազմելու աշխարանքներին:

Նրապարակի վրա է լեզվաբանական մի ուշագրավ ուսումնասիրություն, որն իր ընդգրկած նյութի առումով ամբողջովին նորություն է և աչքի է ընկնում խնդրո առարկայի քննության համապարփակ ու ամբողջական մոտեցումներով, այն կարող է ամբողջացնել հայերենի բառագիտության մի բնագավառի իմաստաբանության բաժինը՝ նույնաբաղադրիչ փոխարեղությունների իմաստային նրբությունների բացահայտումով և ընդհանրապես քարտազված նյութով: Աշխարանքը սեղմ է ամբողջական ուսումնասիրություն է. հեղինակը լուծել է իր առաջադիր խնդիրները և հանգել տեսականորեն ճիշտ եզրակացությունների:

Ունենք մասնակի նկարառումներ, որոնք վերաբերում են աշխարանքում գործածված եզրերին: Աշխարանքում փոխարեղությունների իմաստային քննության ընթացքում առանձնացվում են նույնիմաստ, մերձիմաստ և հեռիմաստ տեսակները: Եթե դրանք քննվում են միջբառային հարաբերությունների տեսանկյունից, ուրեմն դրանք հոմանիշներ են՝ հոմանիշ, նույնանիշ կամ համանիշ դրսևորումներով: Ընդ որում՝ նույնիմաստ տերմինի փոխարեն կարելի է գործածել նույնանիշ, մերձիմաստի փոխարեն՝ համանիշ, հեռիմաստի փոխարեն՝ տարանիշ հասկացությունները:

Նամոզված կարող ենք ասել, որ Ս. Գևորգյանի «Հայերենի նույնաբաղադրիչ փոխարեղությունները» մենագրությունը ընդգրկված հարցերի շրջանակներով և դրանք վերլուծելու գիտական խորությամբ նորայթ է հայագիտության մեջ, այն որոշակիորեն ամբողջացնում է հայերենի բառակազմական իմաստաբանության նկարագրությունը: Ակնկալում ենք, որ հեղինակը կշարունակի իր ուսումնասիրություններն այս մարզում և կկազմի «Հայերենի նույնաբաղադրիչ փոխարեղությունների բառարան» աշխարանքը, որ կարևոր նյութ կարող է տալ հեղադուրողներին լեզվական իրողության ժամանակագրական կտրվածքները որոշելու, վիճակագրություն կազմելու և դրանց ռճական նրբերանգները բացահայտելու առումով:

ԼԱՍԻԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր